

Որ կատարեալ ըլլաք Անոր
կամքին գիտութիւնով բոլոր
իմաստութիւնով ու հոգեւոր
հանճարով, որպէսզի դուք
Տէրոջ արժանի կերպով քա-
լէք աւէն բանի մէջ զինքը
հասկնելով, ամէն բարի գոր-
ծերու մէջ պողարներ ըլլալով
եւ անցումն Աստուծոյ գի-
տութիւնովը: Կող. Ա. 9-10.

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ձեր անդամները անիրա-
ւութեան գործիք ըլլալու մի-
ընծայէք մեղքի, հապա Ձեր
անձերը Աստուծոյ ընծայե-
ցէք, որպէս թէ մեռելներէն
ողջնցած. եւ ձեր անդամները
արդարութեան գործիքներ
Աստուծոյ:
Հոովմ. Զ. 13.

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեկիւն տարեկան.—Յրանսա եւ Սուրիա 5 Յր. Պալքանեան երկիրներ 1 շիւ. ուրիշ երկիրներ 1,50 շիւ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 8

Գ. ՏԱՐԻ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1927

ՃՇՄԱՐԻՏ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿՅ

Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք: (Մատթ. Է. 20):

Ծառ մը երբեք իր պտուղը չուտեր, ըլլայ
ան բարի կամ չար, այլ բոլորովին ուրիշներու
կը թողու գայն: Թէ որ պտուղը չար կամ
անպէտ ըլլայ, պատշաճ ժամանակին կը կըտ-
րուի, որովհետեւ կտրուելու արժանի է: Սա-
կայն թէեւ ինքնին կեանքէ զուրկ է, իր վնա-
սակար սերմերը կը թողու յաջորդ սերունդին:

Բարի ծառ մը իր Ստեղծողին նպատակը
կ'իրագործէ բարի պտուղներ տալով, միեւնոյն
ժամանակ ալ լաւ սերմեր կը թողու ապագայ
սերունդին:

Ճիշդ այսպէս է ճշմարիտ քրիստոնեային
կեանքը, որ ուրիշներու ծառայելէ վերջ իր
ետեւէն բարի օրինակ մը, «Հետք օգտակար»
ստեղծիչ եւ ձեռներեց ազդեցութիւն մը կը
թողու, նման բարի սերմին: Այսպէս մարդը
«իր աշխատութենէն կը հանգչի եւ իր գործերը
իր ետեւէն կ'երթան» (Յայտ. ԺԴ. 15): Ա'րդ,
չարժէր պահ մը կանգ առնել, տեսնելու թէ
ի՞նչ տեսակ սերմեր պիտի թողունք մեր ետեւը
այս աշխարհի մէջ եւ ի՞նչ կ'ակնկալենք
հետեւնիս տանիլ զայիքին համար:

Հաւր բուն իր հաւկիթներէն զատ, ուրիշ
հաւկիթներու վրայ ալ կրնայ նստիլ, սակայն
անոցմէ ելած ձագերը իրենց տեսակին համե-
մատ կը կազմուին: Թունաւոր ծառ մը միեւ-
նոյն օդը, լոյսը եւ ջերմութիւնը կը ստանայ
որքան որ բարի ծառ մը, սակայն անոնք
իրարմէ կը զանազանուին իրենց ժառանգա-

կան, լաւ կամ վատ յատկութիւններով: Յան-
ցանքը ջուրինը չէ որ զանոնք կը ջրէ հաւա-
սարապէս, կամ արեւինը որ երկուքին վրայ
ալ կը ծագի, պակասը ծառին մէջն է: Այս-
պէս ալ ճշմարտութեան Արեւը թէ բարիին եւ
թէ չարին վրայ կը ծագի անխտիր, բայց հե-
տեանքը տարբեր է: Ամէն անոնք, որ Աստու-
ծոյ կամքին, Անոր սիրոյն եւ լոյսին համեմատ
կ'ապրին, կ'օրհնուին եւ յաւիտենապէս պրտ-
ղաբեր կ'ըլլան: Մինչդեռ չարերուն համար,
միեւնոյն սիրոյ Արեւը «Մաշող կրակի» կը վե-
րածուի. (Եբր. ԺԲ. 29):

Երբ մէկը ատրճանակով մարդ մը գնդա-
կահարէ, ատրճանակը չէ որ կը սպաննէ այլ
զայն գործածող ձեռքը, կամ աւելի զինեալին
կամքն ու սիրտը: Թէ որ կարելի ըլլար սիրտը
փոխելով «Աստուծոյ տաճարի մը» վերածել,
այս տեսակ գործ մը անկարելի պիտի ըլլար:
Այս պատճառաւ է որ Աստուած ինքզինքը
ուղղակի սրտին ու հոգիին կը յայտնէ, քանզի
Աստուած հոգի է: Եթէ Ան ինքզինքը մար-
մնաւոր աչքերուն միջոցաւ յայտնէր, մար-
մինը միջոց մը ըլլալով՝ յայտնութիւնը անուղ-
ղակի կ'ըլլար: Ասոր համար թէեւ Աստուած
շատ քիչերուն կը յայտնուի, որպէսզի մար-
մնաւոր աչքով տեսնեն Ձինքը ինչպէս Պօղոս,
շատ մարդոց ալ կը յայտնուի հոգեւորապէս,
Հոգին՝ հոգիին: Երբ մէկը այս հոգեւոր ծնուն-
դը կամ աստուածային հպումը ունենայ, յայն-

ժամ փրկութեան գործիք մը կը դառնայ, փոխան մարդասպանի : Այսպէս մէկը ուրիշները փրկելով ճշմարիտ հոգեւոր կեանքը կ'ապրի եւ անոր գաղափարականները կ'իրագործէ :

Թիպէթի եւ Նիբադի մէջ մշկապորտ այծեամ մը կայ որ իր պորտին քով անուշահոտ գեղձ մը ունի : Կը պատմուի թէ այսպիսի այծեամ մը աստանդական կը թափառէր, միշտ փնտռելով այն ակը ուրկէ կուգար այդ անուշ հոտը : Վերջապէս իր խօլ արշաւաններէն հեւասպառ մահացու անկում մը ունեցաւ խորխորատ մը իյնալով : Մահամերձ կճղակաւորը վէրքերը լզած ատեն իր վիրաւորուած պորտն ալ լցեց ու ահա՛ . . . զինքը յուսահատութեան աստիճանի փնտռել տուած այդ անուշ հոտը բուն իսկ իր մարմինին մէջն էր, իր մորթին տակ պահուած :

Միեւնոյնն է աշխարհի անապատը ապրող մարդուն վիճակը :

Հնդիկները ուխտագնացութեամբ հարիւրաւոր մղոններով կը ճամբորդեն զԱստուած փնտռելու իրենց սրբավայրերուն մէջ, եւ այսպէսով կը ջանան գոհացնել իրենց պապակող հոգիներուն կարօտը :

Մահմետականները ամէն տառապանքի կը յօժարին Մէքքէի եւ Մէտինէի ուխտագնացութեան առթիւ, սակայն այն Աստուածը, զոր մշտնջենապէս կը փնտռեն «Անմերձենալին» որ մեր ներսն է՝ միշտ ներկայ է անոնց մէջ ալ : Նա՛ «շունչէն, ձեռքերէն եւ ոտքերէն աւելի մօտ է» . (Հոովմ. Ժ. 8) մարդուս : Տէր Յիսուս ալ ըսաւ թէ «ո՛չ հոս ոչ հոն այլ ճշմարիտ երկրպագողները Զինքը ամէն տեղ պիտի կրնային պաշտել» . (Յով. Դ. 20-24) :

Անոր քաղցր ներկայութիւնը հասկնալու եւ վայելելու համար մարդ պէտք է վերստին ծնի :

Շատեր կան որ յարատեւ կասկածի մէջ են հոգեւոր կեանքի իրականութեան մասին, վասնզի չեն կրնար բացարձակ իմացական գոհացում ստանալ : Ասոնք յիշելու են թէ իրենց օրհնութիւնն ու երջանկութիւնը գիտութեամբ եւ տարակոյսներու փարատումով չէ որ կը խորունկնայ կամ կ'աւելնայ, այլ հաւատքով եւ հնազանդութեամբ Աստուծոյ կամքին համեմատ ապրելով : Մեր գիտցածը սնսահման չէ եւ չպիտի ըլլայ նոյնիսկ երկինքի մէջ ալ, թէեւ հիմակուրնէ շա՛տ աւելի : Ուստի միշտ տարակուսանքի պատճառ կայ, որովհետեւ տարակոյսը այն ժամա-

նակ կ'անհետի երբ մեր պիտութիւնը Աստուածութեան անսահման վիճակին կատարելութեանը հասնի : Հետեւաբար անհրաժեշտ է մեզի մեր երկնաւոր Հօր վստահիլ, որ ամէն բանի մէջ Ս է ր է : Իր հաճութեամբ մեզի տրուած պարագաները ինչ որ ալ ըլլան, պարտաւոր ենք գոհ եւ երջանիկ ըլլալ անոնց մէջ, որովհետեւ մեր Արարիչը գիտէ մեր կարօտութիւններն նաեւ գիտէ թէ ինչեր մեզի բարի եւ օգտակար են :

Պէտք չէ մեզի ապագան գուշակելու ձեռնարկել : Ինչ որ Աստուած մեզի պալգած է, ան բա՛ւ է : Ենթադրենք թէ առաջուց գիտնայինք ինչ որ մեզի պիտի պատահէր մեր երկրաւոր կեանքի միջոցին, տեղեակ ըլլայինք անոնց լաւ կամ վատ հետեւանքներուն, օգուտէ աւելի վնասակար պիտի չ'ըլլա՞ր այս : Եթէ կեանքի պայքարին մէջ նախապէս յայտնուէին մեզի սպասող փորձութիւնները եւ դժուարութիւնները՝ մեծ եւ պզտիկ իրաբու վրայ բարդուելով ահաւոր լեռներ կազմելով սահմակեցուցիչ վիճակներու պիտի ենթարկէին դմեղ : Թէ որ մէկ հատիկ պզտիկ դժուարութեան մ'իսկ չենք կրնար կուրծք տալ առանց յուսահատութեան ինչպէ՞ս պիտի կրնայինք տոկալ, երբ կեանքին բոլոր ցաւերն ու չարիքները մէկ անգամէն պարզուէին :

Իսկ եթէ բարի վարձքը եւ հաճելի պտուղները առաջուց յայտնուէին, անհոգ եւ անտարբեր ըլլալու վտանգին պիտի ենթարկուէինք, խորհելով որ մեր վարձքը արդէն սա չափ է եւ ուստի անտեղի է անոր համար աւելի ջանք թափել : Ասոր հետեւանքը սա պիտի ըլլար որ մեր վարձքը մեզմէ առնուէր, վասնզի զայն ձեռք բերելու համար հարկաւոր են թէ ԱՆՁ-ՆԱԿԱՆ ՃԻԳ. եւ թէ ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԳԸ :

Մարդուն իսկալը չէ լոկ ալտաքին վարձատրութիւն մը ձեռք բերել : Անոր ամենէն կարեւոր մէկ մասը կը կայանայ անով որ Հոգին ամէն բանի յարմարող նկարագիր մը ստանայ, զոր այս կեանքին մէջ ձեռք կը բերուի մեծ ջանքով եւ խիստ պայքարն երով : Առանց այս յարմարող նկարագրին վարձքը իր արժէքը պիտի կորսնցունէր, քանզի հոգին անկարող պիտի ըլլար զայն հասկնալու եւ վայելելու : Այս պատճառաւ Տէրը մեզի կը պատուիրէ ունեցածն իսկ ամուր բռնել, որպէսզի մէկը չառնէ մեր պսակը (Յայտ. Գ. 11) : Այս կը ցուցնէ թէ, թէեւ մեր վարձքը պատրաստ է, սակայն զայն կորսն-

ցնելու վտանգն ալ դեռ խափանուած չէ :

Արդ, եթէ մէկը ճշմարիտ հոգեւոր կեանքին պարգեւը ստացած ու նոյնինքն Պարգեւատուին ներկայութիւնն ալ վայելած է, իր պարտականութիւնն է կրցածն ընել ուրիշներն ալ յարաբերութեան մէջ դնելու այս բոլոր օրհնութեանց Ակն ու Աղբիւրը Եղբայրն հետ : Եթէ մարդոց ձեռքով շինուած մեքենաները այսքան անհաշիւ եւ օգտակար գործեր կը տեսնեն, ո՛րքան աւելի մենք Աստուծոյ պատկերին պէս ստեղծուածներս քաջալերուելուն քաշխատիլ ուրիշներու ծառայութեան եւ օգտին համար : Շեքամին նա՛յէ, իրեն համար մետաքսեայ հագուստներ շինելէ առաջ ուրիշներուն մետաքս կ'արտադրէ : Թրթուրը ուրիշին համար մետաքս հայթայթելէն յետոյ միայն թիթեռնիկ կ'ըլլայ : Նոյնիսկ իր անձը կը զոհէ, կը մեռնի ուրիշին համար մետաքս շինելով : Հիմա խորհէ՛ ասոր վրայ : Մենք որ կենաց պսակն ենք, որ Աստուծմէ այս փոքրիկ արարածներէն շատ աւելի բարձր ստեղծուած ենք, պէ՛տք է անոնցմէ պակաս գտնուինք մեր ընկեր արարածներուն ծառայելու մէջ :

Գիտենք թէ աշխարհի վրայ երկիրներ կան, ուր խիստ ցուրտ կ'ընէ օդը, միեւնոյն ժամանակ կան երկիրներ ուր շատ տաք կ'ըլլայ : Այս աշխարհի մէջ ապրող բարիներու եւ չարերու վիճակները նմանօրինակ հակապատկեր մը կը ներկայացնեն : Չարին սրտին մէջ յարատեւ խռովութիւն եւ տագնապ կայ, մինչդեռ բարիին սիրտը միեւնոյն պարագաներուն մէջ եւ նոյնիսկ հակառակ արտաքին տառապանքներու, դրախտ մը կ'ըլլայ շնորհիւ իր մէջ ծորող ճշմարիտ խաղաղութեան, քանզի խաղաղութեան իշխանը կը բնակի անոր մէջ :

Քննենք մէջ սրտերը եւ աղօթենք առ Աստուած, որ մեզի շնորհէ ճշմարիտ հոգեւոր կեանքը, որպէսզի կարենանք յաւիտեանս վայելել իւր կենսատու եւ խաղաղարար ներկայութիւնը* :

(*) Սոյն յօդուածը ղրկուած է մեզ Սատու Սումարար Ալիսի եղբորմէ խմբագրութեան մասնաւոր խնդրանքով :

ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԱՀԻ ԿԵՆԱՊԵՐԱԹԻՆԷՆ ՈՆԻՔԸ մեր քով. փախաբողներ կրնան խմբագրութեան հասցէով ունենալ :

.....

ԼՈՒԻԿ ՊԱՏԳԱՄՆԵՐ

ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՍՐ. ՀԱՅՐԵՐԷՆ

— 000 —

Մարմնական ցաւերն ու տառապանքները Աստուծոյ կողմէն մեզի ղրկուած փրկութեան հրաւերներ են, իսկ շատ անգամ հիւանդութիւնները կը ծառայեն Անոր ձեռքին մէջ՝ կարծես բռնի կերպով մեզ իւր կողմը ձգելու : Ծանր թերութիւն մըն է տրտնջալ Աստուծմէ եկած որեւէ աննպաստ բանի համար : Երկնային հրեշտակներն յաճախ կ'օրհնեն զԱստուած մարդկային ցեղի ընծայուած այս փառաւոր առիթին համար :

Խորհէ՛ միշտ թէ՛ Աստուծոյ բարեհաճութենէն կը բղխի ամենազոյզն բարիքն անգամ : Գիտցիր՝ որ յաւիտենական խնդութեամբ պիտի ցնծայ այն, որ այժմ այս երկրի վրայ մի քիչ տառապանք, մի քիչ արցունք ունի :

Կանխէ՛ զքեզ այդ խնդութեան վայելումովը եւ քու ցաւերդ ապագայ երանութեան նախակարապետը սեպէ, վայելէ այժմէն ինչ որ պիտի վայելես երանութեան յաւիտենական երկրին մէջ :

Այնպէս համարէ թէ այս աշխարհ քո քաւարանն է, եւ ունիս վճարումներ քու գործած վնասներուդ, գիտցիր թէ Աստուծոյ մի յատուկ շնորհին արժանացած ես, որ քու ողջութեանդ ներող եղած է քեզ, քանի դեռ շունչդ ունիս : Ատիկա կը քաւէ քու մանկութեան մեղքերն զոյգն վիշտով, բայց անպայման շնորհաց առաւելութիւնովը :

Եթէ կարող չես կրելու ցաւ, եղելութիւնները համբերութեամբ տար, այս է ամենակարճ ուղին վիշտերէ փրկուելու. մենք չարին կ'անգիտանանք տառապանքները սիրով կրել սորվելով :

Թարգմանաբար

Յ.

ԴՈՒ, ԵՍ ԿԱՄ ՈՒՐԻՇ ՈՆԻԷ ՄԷԿԸ

— 000 —

Բարեկամներէս մին Հայտ-Փարքի մէջ քարուած էր բազմաթիւ ներկաներու առջեւ, եւ կը պատրաստուէր ցրուել ժողովուրդը, երբ զգաց թէ մէկը իր թեւին կը դպչէր :

Ետին դառնալով տեսաւ գիւղացի մը որ եռամուրով եւ պաղատանօք արտօնութիւն կը խնդրէր իրմէ քանի մը խօսք խօսելու իր դարձի գալուն վրայով, որ քանի մը շաբաթ առաջ տեղի ունեցած էր :

Բարեկամս նախ վարանեցաւ, գիտնալով լծն-տոնի բնակիչներու մտայնութիւնը, միեւնոյն ատեն կը վախնար որ գիւղացին կրնար վնասել իր քարոզին տուած ազդեցութեան, բայց քանի որ մարդը կը պնդէր, բարեկամս խորհեցաւ որ անշուշտ կրնար զինքը կեցնել, երբ տեսնէր որ սխալ ճամբէ կ'երթայ, ուստի արտօնեց, հրաւիրելով զայն որ անմոռին վրայ ելլէ եւ ըսէ, ի՞նչ որ կը փափաքի :

Ան թէեւ գիւղացիի ոճով, բայց զուարթ եւ բոլոր սրտով կը խօսէր, այնպէս որ շուտով գրաւեց ներկաներու ուշադրութիւնը եւ պատմեց հետեւեալ կերպով :

«Այս պարոնը, որ ձեզի կը խօսէր քիչ առաջ, ինծի թոյլ տուաւ ըսել ինչ որ ունէի սրտիս մէջ երեք շաբաթներէ ի վեր : Ես աղքատ աշխատաւոր մ'եմ, երբեք դպրոց գացած չեմ : Կը ներէք պարզ խօսքերուս համար, որոնցմով պիտի պատմեմ թէ ինչպէս Տէրը զիս փրկեց :

«Իմ վարձակալիս պատկանած ճամբուն եզերքի դաշտը հերկելու ժամանակ, քիչ մը նստայ իմ պանիր-հացը ուտելու : Զիտը ճամբուն եզերքի փոսին մէջ կը կենային : Տեսայ մարդ մը որ դրան վերեւը պատին վրայէն տեսարանը կը դիտէր. յանկարծ զիս տեսաւ դրան վրայէն եւ ցատքելով ինծի մօտեցաւ : Թղը շատ գեղեցիկ է, ըսաւ : Այո՛, Աստուծոյ օրհնութեամբ, ըսի. ինչ որ սովորական է ըսել միշտ առանց սակայն խորհելու Աստուծոյ վրայ : Բայց եւ այնպէս յանկարծ կեցաւ եւ ըսաւ սուր բայց անուշ ձայնով մը. «Գուն կը ճանչնաս Աստուծոյ օրհնութիւնը որ կրնայ քու հոգիդ փրկել» : Անակնկալի եկայ, բայց ըսի. Անշուշտ, մենք ամէնքս ալ կը յուսանք փրկուիլ մեռնելէ առաջ» :

«Ասոր վրայ երկար ժամանակ խօսեցաւ ինծի վերստին ծնելու եւ նմանօրինակ բաներուն վրայ, յետոյ մեկնելէն առաջ գրպանէն գիրք մը հանեց եւ ըսաւ. «Կը փափաքիմ՝ այս գիրքը տալ որմէ պիտի կարդաս այն տեղը, որուն էջը կը ծալլեմ» : Բոլոր սրտով շնորհակալ եմ ըսի, բայց իրեն հասկցուցի թէ ես ոչ դպրոցական եմ եւ ոչ ալ կարդալ գիտեմ : Լաւ հոգ չէ ըսաւ, առաջին հանդիպածդ մարդուն կարդալ տուր այս գլուխը, այսպէս գիրքը ձեզի ու գնաց : Անկէ ի վեր երբեք տեսած չեմ զինքը :

«Քիչ մը վերջը, երբ նստած տեղս շփոթած ու շուարած կը մտածէի այս բաներուն վրայ որ ինծի ըսուեցաւ՝ յանկարծ լսեցի որ տղայ մը սուլելով ու ցատքաւելով դպրոցէն տուն կը վերադառնար : Դործիս կուգայ ըսի ինքնիրենս եւ ձայնեցի : Մօտեցաւ ինծի, իրեն ըսի որ քիչ մը քովս նստի եւ կարդայ այն գիրքէն որ պարոնը ինծի տուած էր : Կարդալ գիտե՞ս հարցուցի, «Այո գիտեմ» նոյն իսկ իմ անունս ալ կըր-

նամ գրել ըսաւ : Յետոյ սկսաւ կարդալ եւ ես իմ բոլոր ուշադրութեամբս մտիկ կ'ընէի : Տղան կարդաց մարդու մը վրայով, որը գիշերանց Յիսուսի եկեր էր. եւ ոչ մէկ բան ինծի այնքան ազդած էին որքան այդ խօսքերը : Շատ անգամ լսած էի երկայն գեղեցիկ բառերով քարոզներ, բայց այդ խօսքերը ինծի շատ կը յարմարէին եւ բոլորովին ապշեցայ երբ ան վերստին ծնելու վրայով կարդաց, որովհետեւ հիշդ ան էր, որուն վրայ պարոնը կը խօսէր քիչ առաջ : Յետոյ քիչ մը ատեն այլեւս չ'ըմբռնեցի թէ ինչ կը կարդար, վասնզի ինքնիրենս կը մտածէի «մինչեւ որ մարդ վերստին չ'ընանի չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել» :

«Հիմա ես երկինք երթալ կ'ուզեմ եւ ցարդ խորհած էի որ եթէ մարդ միշտ լաւը ընել ջանայ եւ իր ընկերը սիրէ, ալ ասկից աւելին ի՞նչ կրնայ ընել, անշուշտ վերջը երկինք պիտի երթայ, բայց այս վերստին ծնանիլը զիս կ'արգիլէ, վասնզի գիտեմ որ ես վերստին ծնած չեմ, եւ ըլլալու կերպն ալ չեմ գիտեր : Գիտեմ որ հիմակուրէն տարբեր բան մը ըլլալու եմ բայց իմ կարողութիւնէս վեր կը թռչի, ուստի կը նշանակէ թէ սա իմ մէջէս գալիք բան մը չէ...

«Յետոյ յանկարծ ինքզինքիս եկած, լսեցի որ տղան դեռ կը շարունակէր կարդալ : Անոր կարդացածները տարօրինակ զգացումներով լեցուցին զիս, թէ վերջապէս առած էի այս մենաշնորհը եւ կը վախնայի նաեւ զայն կորսնցնելէն : Ըսի որ կանգ առնէ եւ վերջի տողերը անգամ մ'ալ կարդայ :

Մինչ կը կարդար, ինչ որ Յովհ. Գ. 16 հաւասարն էր. լոյսը սկսաւ ծագիլ իմ սրտիս մէջ եւ կարծեցի թէ վերստին ծնիլը այս էր. այո՛ գիտեմ թէ Աստուծոյ սուրբ հոգին ալ կարհետեւ եալ բառերուն մէջ. «Ինչու որ Աստուծոյ անանկ սիրեց աշխարհը մինչեւ որ իր միածին որդին տուաւ որ ամէն ով որ Անոր հաւատայ չկորսուի հապա յաւիտեանական կեանք ունենայ» :

«Բայց դարձեալ չէի կրնար հաւատալ որ ատոնք ինծի համար էին : Ամենակարեւոր բառ մը կար որ չէի հասկնար, ուստի հարցուցի տղուն. ինծի կրնա՞ս ըսել թէ «Ամէն ով որ» բառը ի՞նչ ըսել է : Կ'երեւի թէ տղան ալ ինձմէ աւելի չէր գիտեր, որովհետեւ սկսաւ աչ եւ ձախ նայիլ եւ վերջապէս ըսաւ որ լուր չուներ այդ բառին :

Բայց ես չյուսահատեցայ, շատ անձկալից էի այդ մասին, ուստի սկսայ պնդել : Դուն շատ խելացի դպրոցական տղայ մըն ես, դուն գիտես, տես ըսիլ թէ կրնամ անունս անգամ գրել, խորհէ նայիմ, ի՞նչ ըսել է այս բառը : Լաւ չեմ գիտեր թէ ի՞նչ կրնայ նշանակել, ԴՈՒՆ, ԵՍ, ԿՍՄ

Ուրիշ Ոսկէ Մէկէն զատ, ըսաւ տղան ուրախա-
նալով, որ վերջապէս հասկցած էր :

«Հա՛, այդ շատ դիւրին է եղեր, ինչո՞ւ մին-
չեւ հիմա չ'ըսիր : Հիմա նորէն կարդա այդ հա-
մարը եւ միւս բառին տեղը ըսածդ դիր :

«Կարդաց ահաւասիկ. «Ինչու որ Աստուած
անանկ սիրեց աշխարհը մինչեւ որ իր միածին
Որդին տուաւ որ դուն, ես կամ ուրիշ ոեւէ
մէկը, որ Աստուծոյ հաւատայ չկորսուի հապա-
տենական կեանք ունենայ» . յայնժամ գլուխս
երերցնելով շնորհակալութիւն յայտնեցի Աստու-
ծոյ ինծի պէս մեղաւորի մը ըրած շնորհքին հա-
մար : Իր սէրը այնքա՛ն զարմանալի էր . . . այդ
խօսքերը ինծի համար ալ էին . . . :

«Մինչ ես սկսայ դարձեալ արար հերկել, մի
քանի անգամներ եւս կարդալ տուի տղուն, որ
բովէս կը քալէր :

«Յրուան մնացեալ պահերուն սիրտս ուրա-
խութիւնով կը յորդէր եւ իւրաքանչիւր անգամ
որ այն բառերը կը կրկնէի նոր լոյսով մը կը
հասկնայի :

«Իրիկունը ձիերս խնամելէս ետք տուն գացի
եւ կ'ոչս ըսելիք առաջին խօսքերս օրուան փոր-
ձառութիւնս եղաւ. «Աստուծոյ օրհնութեամբը»
(այս անգամ կը հասկնայի այս բառերուն խո-
րունկ նշանակութիւնը) բաղդս շինուած է ըսի
որովհետեւ ճիշդ այսօր յաւիտենական կեանք
ստացայ : «Փառք Աստուծոյ ալ աղօթքիս պատաս-
խանք առի», գոչեց կինս ուրախութեամբ : Պէտք
է խոստովանիմ որ կինս քրիստոնեայ էր եւ ես
շատ անգամ զինքը կը վշտացնէի իմ գէշ ու
չար վարմունքովս :

— Բայց ի՞նչ եղաւ հարցուց :

«Անոր կարդացի կամ աւելի ճիշդը ըսի այն,
որ Յովհ. Գ. 16 համարը կը պարունակէր :

«Այս նոր գտած երջանկութիւնովս լեցուն էի,
ուստի ճաշս ուտելուս պէս վար իջայ իմ դրա-
ցիներուն ալ աւետելու իմ երջանկութեանս մա-
սին, խորհելով որ անշուշտ անոնք ալ պիտի ու-
րախանային :

«Մենք սովորաբար, գիշերները գիւղին «Սա-
տանի որջ» ըսուած գինետունը կը հաւաքուէ-
ինք, (ամենայարմար անուն մ'է ատանկ տեղե-
րու) հին համեմուտ գինեպանը եւ ընկերներս
սկսան պուռալ թէ որքան ուշ մնացած էի եւ
թէ շատ բարի լուր մը ունէի հաղորդելիք :

«Երբ լուցին, անոնք ըսի ճիշդ ա'յնպէս, ինչ-
պէս որ կ'ոչս ըսած էի, եւ կտակարանը բանա-
լով արտասանեցի.

«Ինչու որ Աստուած անանկ սիրեց աշխարհ
մինչեւ որ իր միածին Որդին տուաւ, որ դուն,
եւս, կամ ոեւէ ուրիշ մէկը որ Աստուծոյ հաւա-
տայ չկորսուի, հապա յաւիտենական կեանք
ունենայ :»

«Ամէնքն ալ ապշած ինծի նայեցան, բայց
քան մը ջրսին, վերջապէս գինեպանը գիտնալով
որ եթէ ամէնքն ալ իմ կողմն գային, իր ար-
հեստը պիտի վերջանար, «Կեցի՛ր, կեցի՛ր, մենք
այս տեսակ բաներ չենք ուզեր հոս, ինչ որ Կիրա-
կիները կը լսենք ան բաւական է, քեզի պէտք
ջունինք :

«Իրա՛ւ, գինեպան», ըսի. «Ահա թէ ինչպէս
իմ աչքերս կը բացուին տեսնելու համար թէ ինչ
կ'արժէ մարդկային բարեկամութիւն, առաջ
կրնայի հոս գալ եւ ուզածիս չափ խօսիլ ամէն
բանի վրայ, հոգ չէ թէ որքան ցած ու ստորին
ալ ըլլար, եւ խմել մինչեւ որ ինքզինքս կորսն-
ցնէի. այն ատեն մարդ բան չէր ըսեր, բայց
հիմա որ հոգիս փրկուած է, պէտք չէ՛
որ խօսիմ, ո՛չ ալ փրկիս մասին, ուրեմն այլ եւս
հոս չեմ կրնար կենալ : Ահա այն երեք
շիկիւնը որ քեզի պարտական էի եւ մ'նաք բա-
րով . . . : Բարեկամներ, կը մաղթեմ որ Աստու-
ծոյ խօսքը ընդունիք եւ Յիսուս քրիստոս ձեր
որտեքն ալ գրաւէ եւ որ կրնաք դուք ալ ուրա-
խութիւնով զինքը փառաւորել ինձ նման» :

«Ամէնքն ալ վրաս ինդացին միայն երկու
հոգի ինծի հետեւեցան, փառք Աստուծոյ : Ատենցմէ
մին երիտասարդ մըն էր, որ նախապէս դարձի
եկած էր, սակայն ես եւ նախկին բարեկամներս
զինքը մեր կողմը քաշած էինք : Ան ինծի հե-
տեւեցաւ լալով եւ ըսաւ, «Մի ինծի համար աղօ-
թէ, ես իմ փրկիչս անպատուեցի, լքեցի զինքը,
արդեօք զիս նորէն կ'ընդունին» : Հիմա այս երի-
տասարդը Յիսուսով երջանիկ է :

«Ոչ միայն այն օրը, այլ ամէն օր ամէն տեղ
որ բարեկամի մը հանդիպէի, կ'ըսէի իմ սիրելի
համարս եւ աւետիսս :

«Եթէ դուք մեր կողմը գալու ըլլաք ու զիս
վնասէք պէտք է «Ամէն Ոք»ը հարցնէք, որով-
հետեւ անկէ ի վեր այդ անունը տուած են ինծի,
բայց հոգ չէ, ընդհակառակը շատ գոհ եւ ու-
րախ եմ, որովհետեւ ես շահող կողմն եմ
եւ կը փափաքիմ որ դուք ալ այդ «Ամէն
Ոք»ին մէջն ըլլաք եթէ ոչ ձեր բաժինը միւս
«ամէն ոք»ին մէջը պիտի ըլլայ ուր որ Յայտ. Ի.
15 համարին մէջ է «Եւ Ամէն որ որ, դու, ես կամ
ուրիշ ոեւէ մէկը, որուն անունը կենաց գրքին
մէջ չգտնուեցաւ կրակի լիճին մէջ ձգուեցաւ» :

Բնութեցող, հարցուր ինքզինքիդ դուն օ՛րուն
մէջն ես :

Թարգմանութիւն



ԹՈՒՐԲԵՐԷՆ ՄԱՍ

ԱԶԸԳ ՄԷՔԹՈՒՊ

Սէվկիւլիւ պիրատէրիմ.

Իպրանիւէր րէտալէսինէ տուայլա պապ : Ալլահ Ահտտան սափմը ինսան ճինսինէ կնվար հօլտա սէօյլէսի, էն սօնրատա Օղլու իլէ Մատթ. 21. 37 : Զայ օլան ինսանը քէնտինտէ օլան էպէսի հայաթա հիսսէտար էթմէք իչիւն պուն-ճա աճարիպ հօլ պուլտու — պէս իմանլէ օլան խէլաս : Յիսուս սօն տէրէճէ աճարիպ օլան պու խէլաս իչիւնի պիթիրտիքսէն սօնրա քէնտի շայիրալէրինէ «Իմաի կիտինիզ ճիւղէ միլլէթ-լէրի շայիրա էտինիզ . . . » էմրինի վէրէքէք սլ-մայա չըգալ : Տիւնհատա էտիլէճէք պէս պիր շէյ գալտը, պու խէլաս թէրթիպինի առէմլէքէ պէրրազ պիւտիրմէք վէ հէրքէսի Յիսուսա գը-լաղսղալամազ : Աչըզ պիւտիրմէք քի ինսան պօյլու պօյունճա կիւնահա պաթմը, օնտան չըգմանըն հօլու Յիսուսա կիտիպ Անտէն խէլասը տիլէմէք : Պէն սօն տէրէճէ պէրրազլըզլա աշլա-տըմ քի ինսանը կիւնահատան գուրթարմանըն պիրիճիկ հօլու կիւնահէտարը Յիսուսա հօլլա-մազ վէ անը պաղըր հըլտանա պաղտըրմազ տըր : Օնա իմանլէ պաղան գուրթուլուր պաղմայան էօլիւր. պաղզա հիչ պիր հօլտա գուրթուլամազ : Պին միլիօն վաիզլէր, չօպանլար չալըշտալար պիր կիւնահէտարը կիւնահատան վէ նէթիճէսի օլան էօլիւմէն գուրթարմազլար : Իմաի նէ սլաւտա վազ էթմէլի աչըզ պիլ վէ օնա էլօրէ վազ էյլէ, պօշունա հօրուլմա : Նէ օլա միւմբին օլա պէրրաքճա պունու սանա պիւտիրէլիտիմ :

Վաիզլէրիմիզ պիւսպիլթիւն շաշըրտը, ճան-լարը խէլաս էթմէյէ քէնտիլէր չապալայօր : Մօտըրնիզմ (արգիականութիւն) էօյլէ ֆէնա թէէսիր իշլէթտի րի Բրիտանտուն խաչը սնու-տուլտու չօգճա ախլապիլթ վազ վէրիլլօր : Սէն սանա աիւշիւն եիւզ պին չօպան պիրիքսէ պիր ճան հարատապիլթիմի, հարաթմազ Բապ Ալլահա մախսուս : Իմաի տէլի օլմա, Ալլահա մախսուս իշի սէն էթմէյէ չալըշմա : Ա. Կորն. 5. 5-7-յի տէրին տիւշիւն : Սէնին իշին ինսանը խէլաս էթմէք տէյիլ, խէլասքիարա տէլալէթ, խէլաս Բապա մախսուս : Պէն հիշտէն էքսիք իտիլիմի պէրրազ աշլատըմ, Բրիտանա իսէ հէր շէյտէ հէր շէյ :

Բրիտանտուն խաչը ճինսի ինսանը իքիյէ պէօլէճէք, իման էտինի էպէսի հայաթա, էթ-մէյէնի հէլաքա : Պունու ուղաշտան խայալլամա՝ հաղընտա մութլաղա օլաճազ տէյու պապ, նէ տէրին տուլլուշլա տօլարսըն : Պէնէ պուրա պիթտի Յիսուսուն կէլիշի գանն էթտիլիմիգտէն

չօզ հաղըն : Իմաի հէր ճանա պունու պիւտիր քի Յիսուսա կիթմէզ, եէնի հայաթ ալմազ իսէ մութլաղա էօլէճէք : Էն էյի ախլապի հայաթըն Ալլահն ինտինտէ նէ իաի Եսայի 64. 6 տա պիւտիրիլլօր. «Սալիհ ամէլլէրիմիզին քեաֆ-ֆէսի հայզ պէզի կիպի տիր : » Ճանտան աղլա-յարազ հէրքէսէ սէն թէհիլէքէսինի խապէր վէր օլմայա սէն մէհսուլ օլաճըն : Եգեկիէլ 33. 6 տաքի շու քէլամ պէնիտէ չօզ սարսար. «Լաքին պէքճի գըլըճըն կէլաիլինի կէօրտիւքտէ պօրու-յու չալմայարազ գալմը սաղընտըրմատըղը հալտէ, գըլըճ կէլիպ աշլէրտէն պիր քիշիլի գալտըրըր իսէ, պու առէմ իսեանընտա գալտը-րըլմը տըր, լաքին աշլըն գանըն պէքճինի էլինտէն թալէպ էտէճէյիմ» :

Սէլամալարա

Ա. ԼԵԻՈՆԵԱՆ

Այնթապ

«ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻԻՆ» ՎԷ

«ՀԻՄՆԱՊԱՇՏՈՒԹԻՆ»

Պու կիւն խրիսթիան ալէմինի էն զիյառէ մէշղուլ էտէն մէսէլէ մօտըրնիզմ վէ ֆընալմէն-թըլիզմ պէյնինտէ օլան միւսատէմի է ֆքիար տըր : Պունլարըն մէվզի վէ իթիգատալար հազ-գընտա պիրազ իզահաթ գանն էտէրիմ չայլար իչիւն տախի ֆաիտէտէն խալի օլմազ :

Պու իքի մէքթէպլէր արատընտաքի իւք վէ էսասի ֆարզ Բիթաղը Մուգատտէսէ վէ անըն իլհամ օլմաճընա գարշը թութուլան վաղիլթ տիր : Հիմնապաշտար «պիլթիւն քիթաղ Իլհա-մը Իլահի տիր» տէրլէր : Բ. Տիմ. 3. 16 : Արգիա-կանլար Բիթաղ Ալլահն քէլամընը հալի տիր (կը պարունակէ) տէրլէր : Արգիականլարըն վա-ղիլթի շու տըր. Անլէր իչիւն Բիթաղը Մու-գատտէս պիր սաման հըղընը տըր վէ իչինտէ արփա վար տըր : Պաղը միւֆրիւտ Արգիական-լար պու արփայը սամանտան ալըրըր իքէն Յիսուսըն տաղ իւզէրինտէքի օլան վաղընտան վէ Ա. Կորն. 13ինճի պապտան պաղզա արփա պուլամազլար : Հիմնապաշտար Բիթաղը Մու-գատտէս րուհանի ալէմէ աիւ ճիւղէ վաղալար վէ հաղիգաթլար հաղընտա Ալլահն ֆիքրի վէ «յայտնութիւնը» տըր տէրլէր : Պինտէն ալէյհ ինսանի ֆէլսէֆէ, թալիմաթ, աղ, վէ հէվ էֆ-քիար անա պօյուն էյմէլի վէ սօն սէօգիւ Բի-թաղը Մուգատտէս սէօլէմէլի տէրլէր : Բիթաղը Մուգատտէս սէլահիլթի թամմէյէ վէ նուֆուզը քեամիլէյէ մալիք տիր : Արգիականլար իչիւն միյար վէ հաքէմ նէշվ ու նէմա պուլմազտա օլան խրիսթիան ըթթըլար տէրունիսի տիր :

Պրերինճի ֆարդ հեղինակութիւն մէջէն սի տիր :

Իքրինճի ֆարդ պրերինճիտէն տողան վազի- լէթ տիր : «Հիմնապաշտար» պիւթիւն Բիթապը պիր ֆիքրին տէլալէթ, իտարէ վէ իւնամըյլէ մէյտանա կէլմիշ պիր հէմ ահէնկ էսէր տէյալ թէլազըլէ թաիթէրի իչիւն հէր զըսմընա էնէմ- միյէթ վէրիւրէր : Վէ անլէր իչիւն Բիթապը Մուգատտէն միւթթէլիֆ ազաւատան, միւթէ- նէվլի քէրէսթէտէն, միւթէլատտիւ ուսլուպտա մէյտանա կէլմիշ պիր պիրնա տըր : Անլէր իչիւն Բիթապը Մուգատտէն տէ կէքաիկէրին թէքդիպ էտէն թալիմէր, իտարէ վէ Պոզուլարը իտարէ ինտա, թէնվիր, թալիմ վէ ներշնչել էտէն պիր Ալլահըն էսէրի տիր :

Արդիականլարըն վազիլէթի պուշն աքսիսի տիր : Անլէր իչիւն Պոզուլարը թալիմաթը, գանըշ- լարը, իթիգատաթը պաթըլէլէրի, Մովսէսին թալիմաթը վէ գանըշլարը վար : Պու սէպէպ- տէն անլէր Բրիստոսըն թալիմաթը իլէ Պոզուլարը թալիմաթը արատընտա ֆարդ զըրլար : Անլէր իչիւն Պոզուլարը անլատըլը վէ վազ իթաիլի Բրիստոս պաշգա, Յիսուսըն Յիսուսը պաշգա տըր : Յովհաննէսին «Ալլահլանմըշ» Յիսուսը պաշգա, Մարկոսըն Յիսուսը պաշգա տըր : Հիմնապաշտար իչիւն Բիթապը Մուգատտէն Ալլահըն ինտանը արամալը, չալըրմասը, անա բիճա էթմէսի վէ անա սէյլէմէսի տիր : Արդի- ահանլան իչիւն Բիթապը Մուգատտէնտէ պու- լունան հէր պիր միւթթէլիֆին եազտըլը քէնտի թէճըրիպէի գաթիլէսինտէ զարանլըզտա Ալլահը եօզլամասը տըր :

Պու իքի էսասի ֆարդտան մէյտանա կէլէն գանըշլար շունլար տըր :

4. Հիմնապաշտար ինանըր քի եազըլտըլը իւզրէ Բրիստոս պաքիլէտէն լէքէսիլ տողմուշ տըր վէ պու թալիմ իրիսթիյան իման իզրա- րընըն էսասլարընտան պիրիսի տիր :

Արդիականլարտան չօզլարը ինանըր քի պու պիր խըրաֆաթ տըր վէ պազըլարը ինանըր քի Բրիստոս Պաքիլէտէն տողմուշ օլուն եա օլմա- սըն ֆարդ էթմէզ. պու իրիսթիյանլըզտա էպա- սի պիր թալիմ օլամազ :

2. Հիմնապաշտար ինանըր քի եազըլտըլը իւզրէ Բրիստոս կիւնալարըլը իչիւն էօլաիւ, Անըն գանը քէֆարէթ օլմազ իչիւն տէօքիւ- տիւ քի պիլ կալընըլ Անըն պէրէլէրիլէ շիֆա պուլապիլիլիլ :

Արդիականլար ինանըր քի Բրիստոսըն էօլիւ- միւ զայէթ գուվլէթի վէ միւթթիւ պիր էօլիւմ տիր. չիւնքի հազիգաթ իչիւն էօլաիւ : Անլէր իչիւն Բրիստոսըն էօլիւմիւնիւն գուվլէթի անըն

նիւմունէ օլապիլմէսինտէ տիր : Անլէր պէտէլ օլան էօլիւմիւ գապուլ լթմէզլէր :

3. Հիմնապաշտար ինանըր քի Բրիստոսըն միւթթէլիլի կազլարըլը վէճէլէ էմրի վազըլար տըրլար :

Արդիականլար ինանըր քի միւթթէլէ միւթ- քիսիլ տիր, պիրնալն ալէյհ Բրիստոսըն միւթթէ- զէլէրի անըն հայաթընա սօրաւտան գամմ օլուն- մուշ խըրաֆաթ, եախօթ թապիլէրիլին կանըլը կէօզլիւթէր իլէ կէօրաիւթէրի սատէ վազա- լար տըրլար :

4. Հիմնապաշտար ինանըր քի քիթապ- լարտա եազըլտըլը իւզրէ Բրիստոս իւչիւնճիւ կիւնտէ միւթթէլիֆ ճէնէա ալարազ զըյամ էյ- լէտի :

Արդիականլար ինանըր քի Բրիստոսըն զը- յամընը բուճանի մանաւա թէֆսիլ էթմէլիլիլ վէ պու խուսուստա օլան գանըշլարը փէք էս- րարէնկիլ քէլիմէլէր իլէ թարիֆ էտիլիլ իսէտէ գանն էտէրիմ անլէր զըյամ տէմէքլէ շախի- յէթին էօլիւմունէ էօթէտէ տէվամը տէմէք ան- լարլար :

5. Հիմնապաշտար ինանըր քի պիլէ կզէլի վէ էպէտի, ինտանի վէ իլահի, գուրպան վէ պէօ- յիւք քեանիլի ազամ օլան պիր Բրիստոս լազըմ տըր : Հիմնապաշտար իչիւն Բրիստոսըն տօ- գուշու, լէքէսիլ հայաթը պի կմալ թալիմի, քէֆարէթի, զըյամը, շէֆաթը վէ գուճուրը ճիւմէսի պիր միւթթէտալըն այրըլմայան սաթհ- լարը կիւլի տիր :

Արդիականլար Բրիստոսըն պի էմալ թա- լիմի վէ զըյմէթի հայաթըյա իքթիֆա կտիպ միւթթէպապի ճիւլիլիլի մազընըն գիհնիլէթինէ թէսլիմ կտէրլէր :

Պալատա հէր իքի ֆըրգանըն վազիլէթինի սատազաթլա իգահա չալըշարդ :

Հիւկընընըն թարիլի, քիթապի, գապի վէ հազիգաթ օլապիլմունէ հիւքմիւնիւ կարիյունա թէլք էտէրիլ :

Քարոզիչ

Հայ Աւետ. Եղբայրութեան
ՀՐԱՆԴ. Յ. ԱՊԱՃԵԱՆ

Պուէնտա Այրէն

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՂԱՍՏԻՆ ԵՆ ՀՐԵԱՆԵՐԸ.— Այս երկու բառերը Տէրօջը գաւալիւնիւն Անոր գաւալիւն ալիւլաւոյց սպա- տղնիլը ուրախութեամբ կը լիցնեն, եւ անոնց մասին կը յիշեն Տէրօջը իսթը Մատթ. ԻԲ. 32-34 ի մէջ, մանա- լանդ կըր կ'ըսէ ճնոյնպէս դուք կըր այս ամէն բանիլը կը տեսնէք, գիտցէք որ մօտ է դունիւն քոյ :

Հրէական ազգին վերադարձը, Պաղեստինի վերաշինումը ամենակարկառուն նշաններէն են թէ Անիկա դուռնուն մօտ է, այս պատճառաւ կ'արժէ որ «Բաներք» ընտանիքն ալ մի քանի վայրկեան ուշադիր ըլլայ այն եղելութեանց, որ այժմ տեղի կ'ունենան Պաղեստինի մէջ Հրէաներուն միջոցաւ :

Պաղեստին Յամ. տիրապետութենէն ազատեցաւ մեծ պատերազմի միջոցին : Անիկա դուռնին հրէական երկիր մը չէ, բայց հետզհետէ Հրէան անոր անտեսական վիճակին տէրը պիտի ըլլայ, որովհետեւ համայն հրէական միութիւնն է Պաղեստինը գրաւել իսկ գաղափարականն է հրէական հին թագաւորութիւնը վերահաստատել :

Այս օրուան Պաղեստինը ասկէ տասը տարի առաջ ունէր չէ, վերջին 5-6 տարիներու միջոցին երեք միլիոն ծառեր անկուեցան եւ Լիբանանի վերջին մեռնելու մօտ եղեանին յաջորդները սկսած են իրենց ճիւղերով Լիբանանէն հին անտառները զարդարել : Նոյն իսկ վերջերս յուլի Թերմի մը մէջ կը կարդայինք թէ հարիւրաւոր տարիներէ իվեր դարձած երկրորդեան եւ առաջնեան ցօղն ալ սկսած է իջնել երկրին վրայ :

1927 տարուան Մարտ 4ին հիմնաքարը դրուեցաւ ահագին ջրամբարի մը որ Գեննեսարէթի ծովէն քիչ մը վար Էլզորոսէլոն ձորին մէջ, Յորդանանի եւ Եսրմուքի միացած տեղին մօտ կը կառուցուի, ուրկէ Պաղեստին երկու տարի յետոյ երկու տեսակէտներով պիտի օգտուի : (1). Գարերէ իվեր ջուրի մշտական պակասը ալ չպիտի զգացուի, (2). ջրամբարին ջուրին ոյժովը վառարկած էլեքտրական լոյսը պիտի կրնայ լուսաւորել ամբողջ Պաղեստին, վանդի նոյն ջրամբարին քով էլեքտրակայանութեան գործարան մըն ալ կը կառուցուի :

Անգլիա այս տարուան Ապրիլ ամսուան մէջ Հայֆայի Նաւահանգիստը ամենէն նոր մեծոտով շինելու համար մէկուկէս միլիոն ամլարի պիտի տրուէ մը քուէարկեց եւ անմիջապէս գործի սկսաւ : Հայֆայէն երեսուցեմ երկաթուղիի գիծը ձգուած է, որ կ'անցնի Արմազեդոնի ձորէն, այնպէս որ երկու տարի յետոյ այն գիծերուն վրայէն էլեքտրական կառաշարը պիտի ստարայ, որով կարճեղութեան երեսուցեմ անցնի մի քանի ժամուան խնդիր պիտի ըլլայ այնպէս : Ասկէ երկու ամիս առաջ Զուիցերիացի միախնարուի մը կը պատմէր թէ «Տիբերիա այնքան գեղեցիկ շինուած է որ մարդ հոն եւրոպական ամէն քոնֆօրթ (հանգստութեան թոն) կրնայ գտնել : Գիւղերու վիճակը դեռ անմասնաձեւի է բայց ժամանակի ընթացքին անոնք ալ շուտով պիտի ծաղկին» :

Հրէա գիւղացի մը կ'ըսէր 1927 Ապրիլ 2ին այն տեղէն անցնող ճամբորդի մը «Ես Ամրիկայի մէջ շատ աւելի դրամ կրնայի շինել քան հոս, բայց հոս մեր հայրենիքն է, ուստի հոս եկայ : Երբ դուք վերադառնաք Ամրիկա, ըսէք Ձեր հանդիպած բոլոր հրէաներուն, թող գան իրենց հայրենիքը» : Պաղեստին գացող Հրէաներէն մաս մը թէն ետ կը վերադառնան, այստեղ հանգիստ մնացողներու թիւին համամասնութիւնը միշտ կ'աւելնայ :

Հրէական ազգին մէջ ալ հայերու նման երկու ահագին ուղղութիւն կայ : Մէկ ուղղութիւնը ամէն գնով հայրենիք վերադառնալ զայն ծաղկեցնելու գաղափարը կը

պաշտպանէ, իսկ երկրորդը աւելի յարմար կը սեպէ մ'նալ հոն, ուր որ են ցարդ եւ իրենց գտնուած երկիրներու իր քաղաքացի ապրին : Սակայն այնպէս կուգայ մեզ թէ ուշ կամ վաղ առաջին գաղափարի կողմնակիցներ պիտի շատնան եւ հետզհետէ աւելի մեծ համեմատութեամբ գացողներ պիտի ըլլան հոն :

Ասկէ քանի մը ամիս առաջ Քիշնէլի մէջ, որ եւրոպական ամենակարեւոր հրէական կեդրոն մըն է, համահրէական ժողով մը տեղի ունեցաւ, ուր Ռուսիայի Ռաբբինի մը հանդիսաւոր ծայրով մը կոչ ըրաւ բոլոր Գետացիներուն եւ Ահարոնի ցեղէն եղողներուն, որպէսզի ինքզինքնին պատրաստեն մերձաւոր ժամանակի մէջ իրենց առջեւ դրուելիք պարտականութեան, վանդի կ'ըսէր եհովա զմեզ դարձեալ պիտի հաւաքէ մեր երկիրը, մեր երկու հազար տարիներէ իվեր լքած պաշտամունքները, զոհերն ու պատարագները սկսելու, որովհետեւ Անիկա մեր Մեսիան շուտով պիտի դրկէ :

Հրէա եւ հրէաներու յայտնի աւետարանիչ Բօզըն պէրլ օր մը հրէական ժողովի մը մէջ ի Քիշնի, լսեց ոմանցմէ Բաբբին տոն խօսքերը եւ պատասխանեց թէ՛ այո, ինքը Յիւդէայի մէջ կուգար եւ թէ հոն կային շատ մը Հրէաներ, որոնք կը հաւատային թէ Մեսիան եկած էր 2000 տարի առաջ եւ կը սպասեն թէ Անիկա դարձեալ պիտի գայ : Ասոր միայն մէկ ծերունի մը դէմ դրաւ ահագին բազմութեան մէջէն, զոր շուտ մը ուրիշներու կողմէ քաղաքաւարական կերպով լուծեան դատաւար տուեցաւ :

Վերջին պատերազմը բոլոր ազգերուն նման Հրէաներուն ալ պարագաները փոխեց : Ներկայ երեսասարդութիւնը այդ չորս հինգ տարուան ժամանակամիջոցին, իրենց գտնուած տեղին գիտնողներուն հետ մօտէն յարաբերելով, հետզհետէ իրենց գաղափարները վրայ տուին, այնպէս որ այսօր շատ շատեր իրենց հին հաւատքէն ինկած են, անաստուածութեան, անկրօնութեան, քրիշտոսաշինի եւ կարգ մը ուրիշ աղանդներու քառսին մէջ : Բայց կայ նաեւ մեծագոյն մաս մըն ալ, որոնք քրիստոնէական հաւատքը ընդգրկելով օրինակելի հաւատացեալներ եղած են :

Հրէական վիճակագրութեանց համաձայն Վիեննայի մէջ 17,000 եւ Պուտայիշտի մէջ 97,000 Հրէաներ քրիստոնէական կրօնը ընդունած են, այս վերջիններէն 40,000ը անձնական համոզումով քրիստոնէաներ են : Ասոր օգնած են քրիստոնէական դպրոցներ եւ հաւատացեալներու բարեացակամ վերաբերումը իրենց հանդէպ :

Իսրայէլ հիմա աշխարհի պատգամ բերելու ճամբուն մէջ կը կրթուի : Քրիստոսի կեանքը եւրոպական լեզուով տարուեցաւ, մինչդեռ մինչեւ հիմա միշտ կը մերժէին Անոր ասորած ըլլալը : Հրէան այժմ շատ դիւրաւ նոր կտակարանը կը գնէ, նոյնիսկ Սիոնականներուն գրպանին մէջ յաճախ նոր կտակարան մը կը գտնեն եւ որոնք լրջօրէն կ'ուսումնասիրեն : Աղօթենք որ Տէրը իր խոստումը յիշէ. իսրայէլի ցօղի պէս պիտի ըլլամ : Անիկա 2002-ին պէս պիտի ծաղկի : Ով. Ժ. 5.

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար. Ա. Երեցեան, 40, Բիւ տէ Տօմինիքէն - Մարտի